ՍԵՄԻՆԱՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԼՍԱՐԱՆՈՒՄ

Օրերս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քահանայից լսարանում կազմակերպել էր սեմինար՝ լսարանում ուսանող ապագա հոգևորականների համար: Սեմինարի նպատակն էր՝ հարստացնել ապագա հոգևորականների ունեցած գիտելիքները ՁԻԱՀ-ի մասին և նրանց փոխանցել Ռուս Ուղղափառ Եկեղեցու փորձը՝ այդ հիվանդությամբ տառապող մարդկանց օգնության հարցում:

Երկօրյա սեմինարին զեկուցումներով հանդես եկան ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի ղեկավար Կարեն Նազարյանը, «Արմենիկում» կենտրոնի ներկայացուցիչ, լաբորատոր հետազոտական խմբի ղեկավար Տիգրան Դավթյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նելյուբովան, բժիշկ Իրինա Կրուժկովան և հոգեբան Մարինա Նիկիտինան՝ Մոսկվայից:

Ինչպես նշեց Մարգարիտա Նելյուբովան, ընդունված բարոյական չափանիշների արժեզրկման մեր ժամանակներում Եկեղեցու դերը բարոյական արժեքների վերականգնման հարցում անգնահատելի է: Մյուս կողմից՝ ՁԻԱՀ շատ վարակակիրներ, անբուժելի հիվանդության փաստին բախվելով, հաճախ վերափոխում են իրենց կյանքը և դիմում Եկեղեցու օգնությանը: Այս առումով Ռուս Ուղղափառ Եկեղեցին ՁԻԱՀ-ով հիվանդների հոգևոր և բարոյական աջակցության որոշակի փորձ արդեն ունի և պատրաստակամ է կիսել այն այլ Եկեղեցիների հետ:

«Արձագանքելով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի համագործակցության ծրագրին, մեր ռուս հավատակիցները քրիստոնյային վայել պարտքի գիտակցումով, սիրով և անշահախնդրությամբ եկան Հայաստան և դասախոսեցին մեր ապագա հոգևորականների համար,- նշում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի կոորդինատոր Կ. Նազարյանը:- Վստահ եմ, որ այս սեմինարի ընթացքում ձեռք բերած գիտելիքները մեր ապագա հոգևորականներին պետք կգան իրենց հոգևոր և այդչափ պատասխանատու ծառայության ժամանակ»:

Դասընթացի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեմինարի կազմակերպիչներ ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղան Էկումենիկ հիմնադրամի համակարգող պրն Կարեն Նազարյանին և Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Մարգարիտա Նելյուբովային:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղանի գործունեությունը, ապա կարևորեց Եկեղեցիների միջև նման կապերի հաստատման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում քույր Եկեղեցիներին՝ փոխանցելու միմյանց տարբեր ոլորտներում իրենց փորձառությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ